

14345



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
Երջանկա միջավայրի նախարար  
Հակոբ Սիմիոյան  
«24» 12 2024թ.

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 293 - 24

Նախաձեռնող՝

«ՌԱՀ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ  
ք. Երևան, Գյուլբենկյան փողոց 30/3 շ., 44 բն.

Գործունեությունը

Թալին համայնքի Գեղափի շինարարական ավազների  
հանքերակաման Գեղափ-1 տեղամասում կատարվելիք  
երկրաբանական ուսումնասիրություն  
Արագածոտնի մարզ

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 293 - 24

«24» ջնվարեմբերի 2024թ.

«ՌԱՀ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արագածոտնի մարզի Գետափի շինարարական ավազների հանքերևակման Գետափ-1 տեղամասում կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝

«ՌԱՀ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝

Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
գնահատման հաշվետվություն  
/«Բ» կատեգորիա/

Գտնվելու վայրը՝

Արագածոտնի մարզ, Թալին համայնք,  
Գետափ բնակավայր

**Ներածական մաս.** Արագածոտնի մարզի Գետափի շինարարական ավազների հանքերևակման Գետափ-1 տեղամասում նախատեսվում է իրականացնել օգտակար հանածոյի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ:

Նախատեսվող գործունեությունը, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի՝ (<Օ-150-Ն) 12-րդ հոդվածի 4-րդ մասի 2)-րդ կետի ա. ենթակետի, դասակարգվում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում:

Երկրաբանահետախուզական աշխատանքների նպատակն է պարզաբանելու ԱԿԽ-ի որակական հատկանիշները և պիտանելիությունը՝ շինարարական աշխատանքների համար որպես ավազի, կոպճի և խճի ստացման հումք:

**Նկարագրական մաս.** Արագածոտնի մարզի Թալին համայնքի Գետափի շինարարական ավազների Գետափ-1 հանքերևակման տեղամասի տարածքը զբաղեցնում է շուրջ 55,67 հա մակերես և գտնվում է Գետափ բնակավայրի վարչական տարածքում, որի մոտակա սահմանը գտնվում է Գետափ բնակավայրից 300 մ դեպի արևելք: Դիտարկվող տարածքում առկա են դաշտամիջյան ճանապարհներ:

Տարածքի աշխարհագրական կոորդինատները հետևյալն են՝

հյուսիսային լայնության- 40°22'56.64"

արևելյան երկայնության- 43°37'38.25"

Տարածքի ծայրակետերի կոորդինատները՝ ARMWGS-84 միասնական համակարգով հետևյալն են՝



Նրջատարձային (բեկման) կետեր	Y	X	Գծային չափում
1	8382798.3565	4472183.4704	942.97
2	8382985.6836	4473107.6460	197.03
3	8383179.4110	4473071.7026	252.54
4	8383220.0353	4473320.9516	167.93
5	8383384.6110	4473287.5325	94.69
6	8383365.7678	4473194.7376	208.06
7	8383569.6623	4473153.3343	94.69
8	8383588.5054	4473246.1292	66.04
9	8383653.2308	4473233.0046	167.65
10	8383779.8894	4473342.8445	204.77
11	8383972.5551	4473273.4774	103.12
12	8383952.0612	4473172.4097	192.19
13	8384140.4172	4473134.2161	134.88
14	8384178.4257	4473004.8055	305.65
15	8383898.4764	4472882.1299	86.37
16	8383847.6763	4472812.2798	577.82
17	8383270.6385	4472782.2905	292.77
18	8383044.7076	4472596.0937	44.14
19	8383013.8552	4472564.5325	116.6
20	8382932.3484	4472481.1531	80.42
21	8382916.7012	4472402.2684	89.99
22	8382983.0020	4472341.4195	174.06
23	8382909.7265	4472183.5391	111.37
1	8382798.3565	4472183.4704	111.37

Հաշվետվության տեղեկատվության համաձայն՝ ուսումնասիրվող և հարակից տարածքներում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ չեն հայտնաբերվել, բացակայում են հազվագյուտ էկոհամակարգերը: Ուսումնասիրվող տարածքն մոտակայքում չկան բնության հատուկ պահպանվող տարածքներ, պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ, տարածքը անմիջական սահմաններ չունի ԲՀՊՏ-ների հետ:

Ներկայացվող Գետափի շինարարական ավազների հանքերակման Գետափ-1 տեղամասի երկրաբանահետախուզական աշխատանքների աշխատանքային ծրագիրը կազմվել է հաշվի առնելով տեղամասի երկրաբանական կառուցվածքը, մորֆոլոգիական ձևը, խնդրարկվող



տարածքի չափերը, ուսումնասիրվող հանքերևակման ավազաշերտի սպասվող հզորությունը, տեղամասի հիդրոերկրաբանական և ինժեներաերկրաբանական պայմանները, տարածքի լեռնատեխնիկական պայմանները՝ նախարարի 2021թ. օգոստոսի 11-ի թիվ 06-Ն հրամանով ամրագրված «Ավազի և ավազակոպճային խառնուրդի հանքավայրերի պաշարների դասակարգման կիրառման հրահանգի» ցուցումների, ինչպես նաև առաջնորդվելով տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2022 թվականի ապրիլի 13-ի թիվ 9-Ն հրամանի պահանջներին համապատասխան: Ելնելով հետախուզման համար հատկացված տարածքի չափերից, երկրաբանական պարզ կառուցվածքից, ֆոնդային նյութերի ուսումնասիրություններից՝ տեղամասի հետախուզումը որոշվել է իրականացնել երկրաբանական հանույթագրման և հետախուզահորերի անցման միջոցով: Համաձայն ուսումնասիրությունների ծրագրի՝ Գետափ-1 տեղամասի ԱԿԽ-ի երկրաբանական ուսումնասիրությունները կատարվելու են 1:1000 մասշտաբով երկրաբանական և տոպոգրաֆիական հանույթագրմամբ, ինչպես նաև 50-ից 200 մ հետախուզական ցանցով՝ 35-40 հետախուզահորերի անցմամբ և նմուշարկմամբ: Օգտակար հանածոյի հատիկաչափական կազմի և ֆիզիկամեխանիկական հատկությունների ուսումնասիրության նպատակով նախատեսվում է նմուշարկել բոլոր հետախուզահորերը, որոնք հատել են օգտակար կուտակը՝ օգտակար հանածոյի շերտին հատող ուղղաձիգ ուղղությամբ: Լեռնային փորվածքում յուրաքանչյուր նմուշի երկարությունը կհամապատասխանի օգտակար հանածոյի հաստվածքի հզորությանը: Նմուշարկումը կիրականացվի համախառն բազմափուլ կրճատմամբ, որի արդյունքում վերջնական քաշը յուրաքանչյուր նմուշի համար կկազմի 15-20 կգ: Կիրականացվեն նաև քիմիական և միներալապետրոգրաֆիական կազմի որոշման ուսումնասիրություններ՝ յուրաքանչյուրը 3 նմուշների միջոցով (ընդհանուր 6 նմուշներով): Օգտակար հանածոյի որակական հատկությունները պետք է ուսումնասիրվեն «Ավազ շինարարական աշխատանքների համար» 8736-2014, «Խիճ շինարարական աշխատանքների համար» 8268-82, «Խիճ լեռնային ապարներից շինարարական աշխատանքների համար» 23845-86 և «Խիճ կոպճից շինարարական աշխատանքների համար» 10260-82 ԳՈՍՏ-երի տեխնիկական պահանջների համաձայն: Ուսումնասիրության ծրագրով նախատեսված երկրաբանահետախուզական աշխատանքների տեղամասն ըստ երկրաբանական կառուցվածքի բարդության, համաձայն ֆոնդային նյութերի՝ պատկանում է բարդության 2-րդ խմբին, իսկ երկրաբանական ուսումնասիրությունների արդյունքները թույլ կտան օգտակար հանածոյին տալ որակական և քանակական գնահատական՝ հաշվարկելով հանքավայրի պաշարները՝ համաձայն B և C1 կարգերի: Օգտակար հանածոյի շերտին որակական և քանակական գնահատական տալու նպատակով նախատեսվում է վերագետնյա լեռնային փորվածքների (հետախուզահորերի) անցում: Լեռնային փորվածքների տեղադիրքերը և համապատասխան խորությունները կհստակեցվեն երկրաբանական քարտեզագրման և հանույթագրման աշխատանքների արդյունքների ամփոփումից հետո: Մինչ լեռնային փորվածքների անցումը՝ տեղանքում կտեղադրվեն տեղանշման պիկետներ, որոնք իրենցից ներկայացնում են 1 մ բարձրությամբ ձողեր, որի վերնամասում կապված է լինելու գունավոր ժապավեն՝ վրան նշված ապագա հետախուզահորի համարը և համապատասխան խորությունը: Տեղանշման պիկետները տեղադրվելու են հետախուզահորերի կենտրոններում: Նախագծով նախատեսված է իրականացնել հետախուզահորերի անցում ուսումնասիրությունների ամբողջ տարածքում՝ առավելագույնը 200x200 մ ցանցի խտությամբ, որի արդյունքում կբացվեն ընդհանուր 35-40 հետախուզահորեր 2x2 մ հատույթի մակերեսով (ընդհանուր բոլոր հետախուզահորերի



մակերեսները միասին կլինեն  $40 \times 2 \times 2 = 160$  քմ) և մինչև 7 մ խորությամբ (շերտի հատակի խորությունը՝ համաձայն նախկին ուսումնասիրությունների առավելագույնը կազմում է 6 մ), որոնք ենթադրում են  $4 \times 7 \times 40 = 1120$  խմ ընդհանուր ծավալով լեռնային աշխատանքներ: Այսպիսով, լեռնային փորվածքների ծավալների հանրագումարը կլինի 1120 խմ: Համաձայն ծրագրի պահանջներին՝ բոլոր 40 հետախուզահորերը կենթարկվեն նմուշարկման (եթե հատեն օգտակար հանածոն), որոնցից կվերցվեն 40 շարքային նմուշներով և 2 վերահսկողական կրկնօրինակ նմուշներով: Ինչպես նաև քիմիական և միներալապետրոգրաֆիական կազմի որոշման նպատակով կվերցվի ընդհանուր 3-ական նմուշ: Այսինքն ընդհանուր թվով կվերցվի 48 նմուշ: Փաստագրման և նմուշարկման աշխատանքների ավարտից հետո բոլոր լեռնային փորվածքներում կիրականացվի փորված գանգվածի հետ լցում ամբողջ ծավալով: Հետախուզահորերից առաջացած ամբողջ գանգվածը, բացառությամբ նմուշարկված մասի (մոտ  $0.33$  խմ =  $(42 \times 15$  կգ) /  $(1900$  կգ/խմ), հետ կլցվի հետախուզահորեր: Հետախուզահորերի հետլցման և վերականգնման աշխատանքները կիրականացվեն պայմանագրային հիմունքներով՝ էքսկավատորի միջոցով:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները: Մթնոլորտային օդն աղտոտող հիմնական նյութը փոշին է և շահագործվող տեխնիկա-տրանսպորտային միջոցներից առաջացրած ծխագազերը: Հողային աշխատանքները պետք է կատարվեն հնարավորինս խոնավ եղանակներին և դադարեցվեն քամու առկայության դեպքում: Չոր եղանակներին գրունտային ճանապարհների վրա մեքենաների երթևեկության առավելագույն արագություն պետք է սահմանափակվի 20 կմ/ժ-ը: Շրջակա միջավայրի վրա ազդեցությունն կրճատելու նպատակով անհրաժեշտ է հնարավոր կարճ ժամկետում հետախուզափորվածքներից կատարել անհրաժեշտ նմուշառումը և դիտարկումները, ապա անցնել նրանց ռեկուլտիվացման աշխատանքներին: Այդպես նպատակահարմար է թե՛ անվտանգության, թե՛ բնապահպանական տեսանկյունից: Ծխագազերի արտանետումներով մթնոլորտային օդի աղտոտումը կանխելու նպատակով տեխնիկա-տրանսպորտային միջոցները պետք է շահագործվեն սարքին վիճակում, ենթարկվեն պլանային տեխնիկական ստուգումների: Դիզելային շարժիչները կունենան ծխագազերի վնասակար արտանետումների կլանիչներ: Անհրաժեշտության դեպքում կիրականացվի ճանապարհների ոռոգում ջրցան մեքենայով, չոր եղանակին՝ օրական 2 անգամ: Աշխատանքների ընթացքում աղմուկի աղբյուր կարող են հանդիսանալ միայն ավտոտրանսպորտային միջոցները, սակայն, քանի որ դրանց ինտենսիվությունը ցածր է և կարճատև, կարելի է ենթադրել, որ աղմուկի մակարդակը նույնպես բարձր չէ: Հաշվի առնելով դիտարկվող տարածքի հեռավորությունը բնակավայրերից, ընտրված տեխնիկական և դաշտային աշխատանքների կարճ ժամանակահատվածը՝ գումարային հաշվարկային ձայնային բնութագիրը բնակավայրի սահմաններում կգտնվի նորմայի սահմաններում (նորման 45 դԲԱ): Աղմուկի ազդեցությունը կանխելու նպատակով մեքենաների և սարքավորումների վրա, անհրաժեշտության դեպքում, կտեղադրվեն խլացուցիչներ: Հետախուզավորոնողական աշխատանքների ընթացքում արտադրական նպատակով ջրային ռեսուրսներ չեն օգտագործվելու և չեն առաջանալու ջրի արտահոսքեր: Հետախուզավորոնողական աշխատանքների ժամանակ ջրային ռեսուրսներն օգտագործվելու են փոշենստեցման, ինչպես նաև սպասարկող անձնակազմի խմելու և կենցաղային նպատակներով: Շրջակա միջավայրի վրա ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսվում է, որ փոշենստեցման համար



ջրցանն իրականացվի այնպիսի ծավալներով, որ չառաջանա արտահոսք: Հողի վերին շերտի պահպանության նպատակով, ծրագրով նախատեսվում է հետախուզահորերի անցման ժամանակ հանել և պահեստավորել հողի շերտը (հողաշերտերը կպահվեն յուրաքանչյուր բացված հետախուզահորի անմիջապես հարևանությամբ): Յուրաքանչյուր բացված լեռնային փորվածքի աշխատանքների ավարտից անմիջապես հետո՝ բացված լանդշաֆտները կվերականգնվեն պահեստավորված հողաշերտերով, բացված լեռնային փորվածքները, բնապահպանական և անվտանգության նկատառումներից ելնելով, երկրաբանական փաստագրումից, ֆոտո- փաստագրումից և նմուշարկումից անմիջապես հետո փակվելու և վերականգնվելու են: Ռեկուլտիվացման աշխատանքները կատարվելու են ձեռքով:

Շրջակա միջավայրի պահպանության և առողջացման նպատակով մշակվել են մեղմացնող միջոցառումներ: Մթնոլորտային օդի որակի մշտադիտարկումները պետք է իրականացվեն բավարար հաճախականությամբ, իսկ դրանց արդյունքները կենթարկվեն ստուգման: Ստացված արդյունքները պետք է լինեն հասանելի հանրության լայն շերտերի համար: Մոնիթորինգի արդյունքները գրանցվում են հատուկ այդ նպատակով կազմված և հաստատված գրանցամատյանում: Շրջակա միջավայրի վրա ազդեցության մոնիթորինգն ու դրա արդյունքների տրամադրումը լիազոր մարմնին իրականացվելու է՝ կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի N 191-Ն որոշման պահանջների համաձայն: Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման և մեղմացմանն ուղղված մշտադիտարկումների իրականացման նպատակով նախատեսվում է տարեկան մասնահանել 500000 ՀՀ դրամ:

**Պարճառաքանական մաս.** Արագածոտնի մարզի Թալին համայնքի Գետափ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում, օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացվել է հանրային լուծումներ, որի ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հանրությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ ներքին գործերի, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության մասնագիտացված ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակումներում: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

### Փորձաքննական պահանջներ

1. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել հաշվետվությունում ամրագրված բնապահպանական միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ պահպանելով բնապահպանական բոլոր նորմերը:
2. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել Կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի N 191-Ն որոշման պահանջներով՝ իրականացնելով հաշվետվությունում ամրագրված շրջակա միջավայրի



բաղադրիչների՝ հողի, օդի, ջրերի, կենսաբազմազանության մշտադիտարկումներ, արդյունքները ներառել մոնիթորինգի պլաններում:

3. Երկրաբանական աշխատանքներն իրականացնելիս պահպանել տարածքում առկա դաշտամիջյան ճանապարհները:

4. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջով՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:

5. Անհրաժեշտ է պահպանել ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:

6. Ապահովել և պահպանել բնապահպանական և մշտադիտարկումների ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը, բնապահպանական պահանջների կատարումը:

### ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

«ՌԱՀ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արագածոտնի մարզի Գետափի շինարարական ավազների հանքերակման Գետափ-1 տեղամասում կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝

Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝

Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝

Վարդան Հարությունյան